ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՐԱՆՍԻՍԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ ԵՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ա.

Մեծ Նապոլիոն Տիեզերահրաման Կայսերն Փրանսայու ամենախոհեմ դեսպան մեծազոյն փառաց եւ պատուոյ արժանաւոր Ժոմպաթիստ Բուասսո Նշանակիր արեգական։

Ողորմած Տէր.

Ուրախ եմք դալստեամբ Ձեր 'ի լուսանկար Քրիստոսահիմն Աթոռս ամենայն Հայոց 'ի սուրբ Էջմիածին, ուրախ է և ինքն իմանալապէս և Տաճարն Աստուծոյ, զի ընկալաւ զհրեշտակդ ամենաողորմած Կայսեր որով կարէ ունել պարծանս։

Ձերմեռանդութիւն մեր մեծ է յոյժ, որպէս և կարող ես զգալ, բայց զի ականատես եղեր մեծագոյն աւերութեան, հաւաստի եմք թէ ցաւակից ես մեզ. մատուցաք Ձեզ, ոչ որպէս պարգև արժանաւոր. յորմէ այժմ անձեռնահաս եմք, այլ միայն ի նշան մեծագոյն սիրոյ և ուրախութեան մերոյ և յիշատակ բարեկամութեան զմի մատանի զմրուխտ և զմի ոսկեայ արծաթեայ բաժակ ջրոյ։

Զորս ընկալցիս սիրով և վայելեսցես հանդերձ օրհնութեամբ Սրբոցն, որք աստ և հոգևորականք շնորհօք սրբոյ Տաճարիս Աստուածայնոյ Տէր ընդ քեզ եղիցի և սէր սուրբ Տաճարիս մնասցէ ի սրտի Ձերում անմոռաց։

Ողջ լեր և մեք եմք և մնամք ամենայն միաբանութեամբ աղօթարար վասն առողջութեան ճանապարհի առաջադրութեան Ձերոյ։

Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց

Զսոյն գիր ընդ Թասին և մատանւոյն ինքն ժամոյց ուրբաղանն ի ներկայութեան իւրում կամնորոյ հասցէ ոչ ունի։ (Որ է քաղաքն Մօրոխլեա էր)։

Բ.

Քաջ խորհրդական մեծ կայսրութեան Փրանցայու եւ մինիստր Հաւատոյ եւ օրինաց Մեծ իշխան Փօրտալիս։

Ողորմած տէր և բարերար յուսացողաց
Աղօթարար Ձեր և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք Արարատեան Աթոռոյ սրբոյ Էջմիածնի զողջոյն Յիսուսաւանդ մատուցանեմ Աստուածայինճշմարտապատիկ օրհնութեամբ խնդալի տէր։

Բարերարութիւնք և մարդասիրութիւնք իշխանաց Հռովմայեցւոց առ ազգս Հայոց յաւուրս նախնեաց Ձերոց, երևելի են յոյժ. բայց յորմէ հետէ բարձաւ տէրութիւն և թագաւորութիւն յազգէ մերմէ և հզօրացաւ իշխանութիւն գերչաց մերոց. ըստ ողբերգութեան սաղմոսողին մինչև ցայսօր ժամանակի մինչև իսպառ մոռացեալ եղաք ի սրտէ, որպէս զմեռեալ յաւիտենից և համարեցաք որպէս զանօթ կորուսեալ։

Գոհանամք զԱստուծոյ անոխակալ տեառնէ մերմէ. զի ի սմին ժամանակի բարերար ակնարկութեամբ ուղղեաց առ մեզ զճանապարհ խոհեմութեամբ և իմաստութեամբ բարեհռչակեալ արեգական նշանակիր Ժօմբաթիստ Բուասսօ գեսպանի անպարտելի հզօր կայսե-

բութեան Ֆրանցայու առ բարեսիրտ և առ առատախնամ բարձրագահ Շահն Պարսից և առ յատուկ պաշտպանն և բարերարն Արարատեան Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի բարեբարոյ և քաղցրագութ Աբբաս-Միրզայ որդին և ժառանգն նորա։

Համարիմք թէ բացեալ էցեն մեզ դրունք ողորմութեան ամենաողորմած արարչին, վասն զուարճութեամբ հոգւոյ մերոյ փութամք ներկայանալ Ձերում փառաւորութեան ի ձեռն սոյն քարտիսի՝ զոր մատուցանեմք Ձեզ իբրև զնախկին պտուղ ջերմեռանդութեան սիրոյ մերոյ։

Զամենայն որպիսութիւն մեր և Արարատեան սրբոյ Աթոռոյս կարէ բաւականապէս յայտնել Ձեզ յիշեալ դեսպանն, որ եղև ականատես և է գիր կենդանի, մեք միայն յուսովն, զոր ունիմք 'ի յիշատակարանաց նախնեաց մերոց, վստահանամք խնդրել միայն զի բարերար ակնարկութիւն հոգւոյ Ձերում ի պատիւ Քրիստոսական սուրբ հաւատոյ տարածեալ առ մեզ սիրով. մատուցջիք առ նորին ամենաողորմած կայսերութիւնն զգիր մեր, զոր ընդ այսմ եկեալ յիշեալ դեսպանին մատուցաք խոնարհութեամբ։

Հաւատի առնեմք զՁեզ զի յիշատակութիւն բարերարութեան Ձերոյ յաւիտեանս ժամանակաց ընդ առաջնոց նախնեաց Ձերոց մնայ անմոռանալի առ ամենայն ազգս Հայոց։

Եւ մեք նովաւ հանդերձ եմք և մնամք զամենայն յաւուրս կենաց մերոց աղօթարար վասն կենաց Ձերոց

'Ի 1808 յունիս 16 Ողորմած Տէր
ի սուրբ Աթոռն Էջ- Ձերոյ բարձրութեան
միածին որ յԱրարատ. Խոնարհ Աղօթարար
Դանիէլ Եպիսկոպոս ամենայն հայոց։

Ցերեսն սոյն Թղթոյ
Նորին բարձր գերազանցութիւն մեծ կայսերութեան Ֆրանցայու քաջ խորհրդական և մինիստր հաւատոյ և օրինաց Փորտալիս մեծ իշխան ողորմած Ցեսուն մերում
Ի Թագաւորական քաղաքն Փարիզ

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՆԱՊՕԼԵՈՆ ՄԵԾԻՆ

Առ մեծն Նապոլէոն ի Դանիէլ կաթողիկոսէ ամենայն հայոց

Մեծ Նապոլէոն խաչապսակ ինքնակալ օգոստոս կայսր Ֆրանցայու տիրող քարեպաշտութեան

Ամենաողորմած թագաւոր և պաշտպան եկեղեցւոյ հաւատացելոց

Աղօթարար ցանկալի կենացդ և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի, իմանալուսն զօրութեամբ ներկայացեալ առաջի Բարձրագոյն Աթոռոյ Սուրբ Թագաւորութեան Ձերոյ խոնարհ երկրպագութեամբ զհոգևորական օրհնութիւնս հանդերձ Քրիստոսական ողջունիւ Ձեզ մատուցանեմք։

Յաւիտենից ժամանակաց կայսերք Հռովմայեցւոց մեծագոյն գթասիրութեամբ բարերար և ողորմած են եղեալ միշտ Թագաւորաց և Քահանայապետաց Հայոց և ողջոյն ազգի նոցա և մինչև ցայսօր ժամանակի անմոռաց ունի եկեղեցին Հայաստանեայց. և պարծի նովաւ միշտ, բայց ի բազմանալ անտանելի նեղութեանց և աշխարհակործան մեծամեծ խռովութեանց յԱսիոյ և մանաւանդ աշխարհս Հայոց օր ըստ օրէ զրկեալ յամենայն բարեբաղդութեանց, ահա՛ ծաւոր ամք են, զի վասն ժամանելոյ ի յետին նուաստութիւն իբրև ի մո-